ԶՆՏԱՆ, պ. զինտան, գէշ բանտ. զնտանած, բանտուած:

ԶՈՒԶՈՒՄ, մ. հ., սափոր ? զուզում մի գինի:

ԶՈՒԿԱԿ, մ. հ., ա. զօքաք, փողոց:

ԶՈՒԼՈՒՄ, ա. բռնութիւն, անգթութիւն, աղէտ:

ԶՐԱԲԱԽՏ, մ. հ., անբաղդ, վատաբաղդ:

ԶՕՀԱԼ, ա. Երեւակ մոլորոկը, Saturne:

ԶՕՌ, պ. եւ թ., ուժ, բռնութիւն. զօռով, բռնի:

ԶՕՐՈՎ ՃՈՐՈՎ, մ. հ., բռնի:

## Է.

ԷԳԻ. մ. հ., այգի:

ԷԶԻԶ, Ա. բ. տես ԱԶԻԶ.

ԷՃԱՊ, տես ԱՃԱՊ.

ԷՄԱՆԷԹ, տես ԱՄԱՆԱԹ:

ԷՅՆԷԿ, տես ԵՅՆԵԿ:

ԷՆՑ, ՀԷՆՑ, ՀԱՆՑ, մ. հ. այնպիսի:

ԷՆՑԵՂ, ՀԱՆՑԵՂ, ՀՆՑԵՂ, մ. հ., այն տեսակ:

ԷՆՕՔ, մ. հ., անով, անոր համար:

ԷՊԻՇՈՒՄ, ԷՊՐՇՈՒՄ, ԷՊԻՒՇՈՒՄ,տես ԱՊՐՈՒՇՈՒՄ:

ԷՊԼԷՀե, տես ԱՊԼԱՀ:

ԷՎԷԼ, մ. հ., աւելի:

ԷՐԱՑ, մ. հ., ըրաւ:

ԷՐԵԼ, տես ԵՐԵԼ:

ԷՔՍԷ, թ. ծոծրակ. ետեւի կողմ, (ձիուն) գաւակը:

ԷՕԼԻՒՄ, թ. մահ:

## Ը.

ԸԽՐԱՐ, տես եւ ԻԽՐԱՐ, ա. իքրար, 1. որոշում, 2. խոստում,
3. երեշխաւորութիւն:

ԸՂԵՂ, մ. հ., (ուղեղ). ուղեւծուծ:

ԸՂՈՐԴ, մ. հ., (ուղորդ), ուղիղ, ճշմարիտ:

ԸՆՏԻԿ, մ. հ., հունտ, հունտիկ:

ԸՆՑԳՈՒՆ, տես եւ ՀՆՑԳՈՒՆ, մ. հ., այնպիսի, այն տեսակ:

ԸՌԱԿԱՆ, ԸՌԷՅԿԱՆ, ԸՌԷԿԱՆ, ՌԷՅԿԱՆ, Ա. բ., պ. րիյկէն, պիղծ, աղտեղի, գէշ տեսակի բան, վարնոց, աժաննոց: